ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՄԵԾԱՐԵՑԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ

2018 թվականի հոկտեմբերի 13-ին թբիլիսահայերը նշեցին Սուրբ Թարգմանչաց տոնը:

Այդ առիթով, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը մատուցեց սուրբ եւ անմահ պատարագ՝ նվիրված Թարգմանչաց տոնին:

Պատարագից հետո, մայրաքաղաքի Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում կատարվեց հոգեհանգստի կարգ եւ ծաղիկների խոնարհում Մեծերի շիրիմներին:

Ապա Թարգմանչաց տոնի միջոցառումը շարունակվեց Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» մշակութային կենտրոնում, որտեղ օրվա առիթով ցուցադրության էին ներկայացվել վերջին երկու տասնամյակների վիրահայ դասական եւ ժամանակակից հայ, վրաց, ռուս թարգմանական գրականության նմուշները, բառարաններ, զրուցարան:

Թումանյանի հյուրընկալ տան սրահում ներկայացվեցին Գիվի Շահնազարի, Զեզվա Մեդուլաշվիլու, Անահիտ Բոստանջյանի, Վիկտոր Հովսեփյանի, Մաղվալա Գոնաշվիլու, Սայաթ-Նովայի, Տերենտի Գրանելու, Օքրո Օքրոյանի, Վահագն Դավթյանի, ժամանակակից գրողներ Էդվարդ Միլիտոնյանի, Գագիկ Դավթյանի, Սոնա Վանի, Մարինա Կիրակոսյան-Մոսեսովայի, Աղասի Գեւորգյանի եւ ուրիշների ստեղծագործությունների նոր թարգմանությունները:

Երեկոյին Թարգմանական արվեստի մասին իրենց խոսքն ասացին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, հայագետներ Ռամազ Գորգաձեն, Նաթիա Չանթլաձեն, պրոֆեսոր Էմմա Ախտյանը, լրագրող Գայանե Բոստանջյանը, բանաստեղծներ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան, Արտեմ Գրիգորենցը, Միխայիլ Անանովը, Գարրի Ղալամքարովը:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ԲԱՑ ԴԱՍԻՆ

Հոկտեմբերի 19-ին Ախալքալաքիում Արդարադատության տան բացման արարողությանը մասնակից Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին այցելեց Ախալքալաքի թիվ 1 դպրոց:

Կրթօջախում պետնախարարը հանդիպում ունեցավ ուսուցիչների հետ, խոսեց ազգային փոքրամասնություններին վերաբերող բոլոր այն ծրագրերի մասին, որոնք կյանքի են կոչվել: Նա, մասնավորապես, կանգ առավ «1+4» եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ստաժավորման ծրագրերի վրա:

Հանդիպումից հետո, նախարարը ներկա գտնվեց վրաց լեզվի «Բաց դասին», որտեղ 8-րդ դասարանի աշակերտները ելույթ ունեցան վրացերենով:

- Ողջ պետության տարածքով, Սամցխե-Ջավախեթիում սահմանված առաջնահերթությունը՝ որակյալ կրթության հետ մեկտեղ, պետք է հնարավորություն ընձեռի որակյալ ուսումնասիրել վրաց լեզուն, ինչը եւ նրանց ապագայի բանալին է: Այսօր երեխաները խոսում էին իրենց երազանքների մասին, իսկ որպեսզի այդ երազանքները իրականանան եւ հաջողությամբ պսակվեն իրենց հայրենիքում, նրանք պետք է լավ կրթություն ստանան, իհարկե, իրենց մայրենի լեզվի հետ միասին: Անհրաժեշտ է տիրապետել պետական լեզվին, որպեսզի ապագայում փակ դռներ չլինեն,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «1+4» ՆԱԽԱԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՏԱԺԱՎՈՐՈՒՄԸ

Ինչպես արդեն հայտնել էինք, հոկտեմբերի 8-ին մեկնարկել է վրաց լեզվի «1+4» ծրագրից օգտվող ուսանողների ստաժավորման ծրագրի աշնանային փուլը:

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարությունից հայտնում են, որ 2018-ի աշնանային ընդունելության համար սահմանված է 500 թափուր տեղ: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից, պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլու նախաձեռնությամբ: «1+4» ծրագրով վրաստանյան բուհերում սովորող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ քաղաքացիները հնարավորություն են ստանում ստաժավորում անցնել երկրի պետհաստատություններում, կենտրոնական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներգրավվելու են ստաժավորման գործընթացում, հոկտեմբերի 8-ի մրցույթի արդյունքում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է հոկտեմբերի 22-ը:

Ստաժավորումը կտեւի 1-6 ամիս:

«ՁԱՐԹՈՆՔ - 2018»

ՊԱՏԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ

Վրացահայ դեռահաս հեղինակի գրական թոթովանքները ներկայացնող Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության «Ձարթոնք» հայալեզու տարեգիրքը (խմբագիր՝ Ժորա (Գեւորգ) Սնխչյան) արդեն երկու տասնամյակ հոգում է Վրաստանում ապրող գրասեր պատանիների բացահայտման գործը:



Այս օրերին լույս տեսած հերթական «Ձարթոնք-2018»-ի 30 սկսնակ հեղինակներ ազնիվ հույզերով, անկեղծությամբ ընթերցողին են ներկայացնում իրենց մատաղ հոգու անկաշառ սերը Վրաստան ու Հայաստան հայրենիքներին, ծննդավայրին, ծնողներին, բնությանը, ընկերոջը, սիրած էակին:

Հանդեսը լեցուն է նման տագնապախռով հույզերով ու մտքերով՝ որպես ճշմարիտ արձագանք ապրած ժամանակի ու նրա բերած տարաբնույթ խնդիրների: Այստեղ պատանին թղթին է հանձնում այն, ինչի միջով անցնում են ինքն ու իր երեւակայությունը...

Ի դեպ, հանդեսի 30 հեղինակներից 28-ը չափածո է ստեղծագործում, երկուսը՝ արձակ:

Թերթելով «Ձարթոնքի» էջերը՝ նորից համոզվում ես, որ նա իր շուրջն է համախմբել երկրի շնորհալի պատանի ստեղծագործողներին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

MAGTI

ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ
ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ,
ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

Օպտիկական – մանրաթելային համացանց
20 մգ/վրկ փաթեթ

IP հեռուստատեսություն
Վերափաթեթավորման գործառույթով – 99 ալիք

Բջջային հեռախոս
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի
խոսակցություն Մագթիկոմի բջջային
ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:
www.magticom.ge

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դուք 6 տարի ժամկետով Վրաստանի նախագահ եք ընտրում

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկությունն անց է կացվում ժամը 08:00-ից մինչև ժամը 20:00-ը:

Քվեարկության շենք մտնելիս՝ ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրեք Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը և նրա մոտ անցեք նշմարման ստուգման ընթացակարգ:

Եթե պարզվի, որ ունեք նշմարում, Ձեզ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Նշմարման ստուգման ընթացակարգն անցնելուց հետո, գնացեք գրանցման սեղանի մոտ և գրանցում իրականացնողին ներկայացրեք ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:

Անցեք նշմարում:

Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, Ձեզ չի տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք:

Ընտրողների ցուցակում ստորագրեք Ձեր ազգանվան երկայնքով:

Գրանցում իրականացնողից ստացեք կնիքով և ստորագրությամբ վավերացված ընտրական քվեաթերթիկ:

ՔՎԵԱԽՑԻԿՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՈՒՄ ՇՐՋԱԳԾԵՔ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՑԱՆԿԱԼԻ ՄԵԿ ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ

Եթե վնասել եք ընտրական քվեաթերթիկը, դիմեք ընտրական հանձնաժողովի նախագահին, նրան փոխանցեք վնասված քվեաթերթիկը և պահանջեք նոր ընտրական քվեաթերթիկ:

Քվեախցիկից դուրս գալուց հետո, վերցրեք հատուկ ծրար և ծալած ընտրական քվեաթերթիկը զետեղեք նրա մեջ:

Հատուկ ծրարը գցեք քվեատուփի մեջ:

Քվեարկությանը մասնակցելուց հետո, խնդրում ենք դուրս գնալ ընտրական տեղամասից:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է.

- **Տեսողությունից զուրկ ընտրողի համար՝** քվեաթերթիկը լրացնելու շրջանակ/հատուկ ձև
- **Տեսողության խնդիրներ ունեցող ընտրողի համար՝** խոշորացնող տեսապակի
- **Սայլակից օգտվող ընտրողի համար՝** հարմարեցված տեղամասերում հատուկ քվեախցիկ
- **Լսողությունից զուրկ և աջակցություն ստացող ընտրողի համար՝** քվեարկությունն արտացոլող պաստառ:

Եթե չեք կարող ինքնուրույն լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունեք քվեախցիկ օգնության հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի և դիտորդի:

ԿԸՀ-ի կայքէջը հարմարեցված է տեսողությունից զուրկ և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Լսողությունից զուրկ և լսողության խնդիր ունեցող ընտրողը, ԿԸՀ-ի կայքէջում գրանցվելուց հետո, ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոն տեսազանգ կատարելու և ընտրական տեղամասում ժեստերի լեզվին տիրապետող օպերատորի ծառայությունից օգտվելու հնարավորություն ունի:

ՄԵՆՔ ԽՈՍՈՒՄ ԵՆՔ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ



WWW.CESKO.GE

+995 32 2 51 00 51

ცესკო
საარჩევნო სისტემების განვითარების, რეფორმებისა და სწავლების ცენტრი

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների հասնելու ճանապարհային քարտեզը հետեւյալն է. իմ հրաժարականից հետո, հանրապետության նախագահն անհապաղ ընդունում է կառավարության հրաժարականը, առաջիկա 14 օրերի ընթացքում երկու անգամ Ազգային ժողովում վարչապետ չի ընտրվում, ինչի բերումով Ազգային ժողովն արձակվում է, եւ Հանրապետության նախագահի կողմից նշանակվում են արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

Այս ողջ ընթացքում կառավարության անդամները շարունակելու են իրենց պարտականությունների կատարումը, ես շարունակելու եմ կատարել Հայաստանի Հանրապետության վարչապետի սահմանադրական լիազորությունները, ասել է, թե՝ շարունակելու եմ լինել ժողովրդի հաղթանակի երաշխավորը, ու եթե դեկտեմբերին կայանալիք ընտրություններում դուք վստահության քվե տաք մեր քաղաքական ուժին, ես կվերընտրվեմ ՀՀ վարչապետի պաշտոնում:

Խորհրդարանական ուժերը ցույց են տվել, որ, անկախ բոլոր հակասություններից ու տարընթերցումներից, մեր պետությունը, նրա կայունությունն ու անվտանգությունը կարմիր գիծ են նաեւ իրենց համար, եւ հավատում եմ, որ նրանք երբեք այդ գծերը չեն անցնի: Մանավանդ որ, թե՛ ՀՀԿ, թե՛ «Ծառուկյան» դաշինք, թե՛ ՀՅԴ խմբակցությունները հրապարակային հայտարարել են, թե չեն պատրաստվում վարչապետի թեկնածու առաջադրել կամ վարչապետ ընտրել:

Նաեւ ուզում եմ Ազգային ժողովի նախկին մեծամասնության ներկայացուցիչներին ասել, որ մենք, այո՛, քննադատել ենք եւ քննադատում ենք ձեզ, բայց սա չի նշանակում, թե Հայաստանում թշնամիներ ենք փնտրում, կամ պիտի փնտրենք:

Իմ ողջ քաղաքական գործունեության ընթացքում ասել եմ, հիմա էլ ուզում եմ կրկնել. Հայաստանում, հայության շրջանում թշնամիներ չեմ ունեցել, չունեմ եւ չեմ ունենա:

Եվ ուզում եմ քաղաքական բոլոր ուժերին հաջողություն մաղթել արտահերթ խորհրդարանական ընտրություններում եւ հաստատել, որ մեր կառավարությունը երաշխավորելու է ընտրություններում ժողովրդի ազատ կամարտահայտությունը...

ԱՌՋԵՎՈՒՄ ԵՆ 14 ՎՃՌՈՐՈՇ ՕՐԵՐԸ

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հոկտեմբերի 17-ին, Հայաստանի նախագահի նստավայրում, տեղի ունեցավ երկրի նախագահ Արմեն Սարգսյանի հանդիպումը երկրի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի հետ:

Հայաստանի նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կայացած հանդիպմանը, վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը նախագահին մանրամասն տեղեկացրեց ընթացիկ քաղաքական իրավիճակի, սպասվող զարգացումների մասին:

- Պարոն նախագահ, հիմա մենք արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջափուլ ենք մտնում, որովհետեւ խորհրդարանական խմբակցություններն իրենց դիրքորոշումը հրապարակային հայտարարել են, որ նրանք չեն պատրաստվում վարչապետի թեկնածու առաջադրել կամ այլ վարչապետ ընտրել, ինչը նշանակում է, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ կա ըմբռնում,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ մինչեւ արտահերթ ընտրությունների նշանակումը մնացած 14 օրերը նշանակալից են առաջիկա ընտրությունների քարոզարշավի մթնոլորտը, ծրագրերի եւ ռազմավարությունների մրցակցությունն ապահովելու համար:

Արմեն Սարգսյանը վստահություն հայտնեց, որ կառավարությունը կներդնի հնարավոր բոլոր միջոցներն ու անհրաժեշտ գործողությունները, որպեսզի 14 օրերի ողջ ընթացքը, եւ ապագա ընտրությունները տեղի ունենան օրենքի եւ օրինականության պայմաններում:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել ընտրությունների անցկացման հարցի շուրջ, ընդգծել ընտրական գործընթացի՝ որպես ժողովրդավարության զարգացման առանցքային մեխանիզմներից մեկի կարեւորությունը:

ԿԱՅԱՑԱՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 13-ին Երեւանում կայացավ Հայաստանի մայրաքաղաքի նորընտիր քաղաքապետ Հայկ Մարությանի պաշտոնը ստանձնելու երդման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոսը, երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Համաձայն Երեւանի ավագանու կանոնակարգի 124-րդ կետի, նիստը վարում էր ավագանու ավագ անդամ Լիլիթ Պիպոյանը: Երեւանի նորընտիր քաղաքապետ Հայկ Մարությանը երդվեց, քաղաքապետի լիազորությունները իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, օրենքները, Երեւանի ավագանու որոշումները, ազնվորեն եւ բարեխղճորեն կատարել Երեւանի քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երեւանի բարգավաճմանը, գործել՝ ի բարօրություն նրա բնակիչների:

Համաձայն Երեւանի ավագանու կանոնակարգի 125-րդ կետի, Երեւանի քաղաքապետի երդման ստորագրված տեքստն ի պահ հանձնվեց Երեւան քաղաքի թանգարանին: Երեւանի ավագանու անդամ Արթուր Իսպիրյանն ու Երեւանի պատվավոր քաղաքացի Տիգրան Մանսուրյանը Երեւանի քաղաքապետի խորհրդանիշ հանդիսացող լանջաշղթան՝ հայոց տասներկու մայրաքաղաքների անվանատառերով, հանձնեցին նորընտիր քաղաքապետին:

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 6 ՏՈԿՈՍԻ ԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) նոր կանխատեսումներով, 2018թ. Հայաստանում կգրանցվի 6% իրական տնտեսական աճ: ԱՄՀ-ի կողմից հոկտեմբերին հրապարակված «Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները» (World Economic Outlook) զեկույցում Հայաստանի վերաբերյալ կանխատեսումները զգալիորեն բարելավվել են ապրիլ ամսին հրապարակված զեկույցի համեմատ:



Եթե ապրիլ ամսվա զեկույցում 2018-ի համար ՀՆԱ իրական աճը կանխատեսվում էր 3,4%-ի սահմաններում, ապա կանխատեսումների վերանայումից հետո ԱՄՀ-ն Հայաստանում ընթացիկ տարում սպասում է 6% իրատնտեսական աճ: Ընդ որում, կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշները բարելավվել են նաեւ 2019 թվականի համար: Եթե նախորդ զեկույցում 2019թ. կանխատեսվում էր 3,5%, ապա նոր զեկույցում սպասվում է 4,8% աճ:

Ըստ զեկույցի, ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսության աճի տեմպերը կպահպանվեն. ակնկալվում է, որ մինչեւ 2020 թվականը գլոբալ աճը կմնա կայուն՝ 3,7 տոկոս:

Ըստ ԱՄՀ փորձագետների, 2018թ. Վրաստանում կանխատեսվում է 5,5% իրատնտեսական աճ (նախորդ զեկույցով՝ 4,5%), Ռուսաստանում՝ 1,7% (1,7%), Ղազախստանում՝ 3,7% (3,2%), Բելառուսում՝ 4% (2,8%), Մոլդովայում 3,8% (3,5%) եւ Ուկրաինայում՝ 3,5% (3,2%):

Հատկանշական է, որ նոր կանխատեսումներով ԱՄՀ-ն նվազեցրել է Ադրբեջանում սպասվող իրատնտեսական աճի մակարդակը մինչեւ 1,3%, նախորդ 2%-ի փոխարեն: Նույն պատկերն է նաեւ Ղրղզստանում՝ 2,8% աճ, նախորդ 3,3%-ի փոխարեն, եւ Թուրքիայում՝ 3,5% աճ, նախորդ 4,5%-ի փոխարեն:

Տարածաշրջանի երկրների շարքում Հայաստանը կանխատեսվող տնտեսական աճի տեմպերով առաջատարն է:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ, ԸՆԴՈՒՆՎԵՑ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ

Երեւանում աշխատանքն ավարտեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովը: Գագաթաժողովի փակման արդյունքներով, ընդունվեց Երեւանյան հռչակագիրը:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղարի ընտրության արդյունքները, որոնց համաձայն, այդ պաշտոնում ընտրվեց Ռուանդայի արտաքին գործերի նախարար Լուիզ Մյուշիկիվաբոն:

Նիկոլ Փաշինյանը բարձր գնահատեց գլխավոր քարտուղարի պաշտոնում Միքայել Ժանի կատարած գործունեությունը եւ շնորհավորեց Լուիզ Մյուշիկիվաբոյին նոր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:

Հայաստանի վարչապետը նրան մաղթեց հաջողություններ ստանձնած առաքելության մեջ եւ վստահություն հայտնեց, որ նա իր գործունեությամբ կնպաստի կազմակերպության հետագա զարգացմանը:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ «ԵՐԵՎԱՆ-2800» ՏՈՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Երեւանի քաղաքապետարանը հրապարակել է հոկտեմբերի 21-ին անցկացվելիք «Երեւան-2800» հոբելյանական միջոցառումների ժամանակացույցը:

Երեւանի կենտրոնական հատվածներից բացի, այդ օրը տոնական հանդիսություններ են նախատեսված նաեւ վարչական շրջանների կենտրոնական հրապարակներում ու զբոսայգիներում:

ԵՐԵՎԱՆ-ՍԵՎԱՆ-ԻՋԵՎԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿՓԱԿՎԵՆ

Նորոգման աշխատանքներով պայմանավորված՝ հոկտեմբերի 17-ից կփակվի Երեւան-Սեւան-Իջեւան (Մ-4) միջպետական ճանապարհի 32,600-րդ - 36,000-րդ կմ հատվածի եւ 64,174-րդ - 67,150-րդ կմ հատվածի աջակողմյան երթեւեկությունը:

Նորոգման աշխատանքները կընթանան հատվածաբար՝ աջակողմյան ճանապարհահատվածի նորոգման ավարտից հետո, աշխատանքները կընթանան երթեւեկելի գոտու ձախակողմյան մասում:

Համապատասխանաբար, յուրաքանչյուր հատվածի հիմնանորոգման ընթացքում երթեւեկությունը կտեղափոխվի ճանապարհի հանդիպակաց գոտի: Նորոգման աշխատանքներով պայմանավորված՝ հոկտեմբերի 17-ից մասնակի կփակվի նաեւ նույն ճանապարհի Հովք համայնքին հարող 110,900-րդ-118,300-րդ կմ հատվածը: Աշխատանքները կավարտվեն պայմանագրով նախատեսված ժամկետում:

ՄԱՀԱՑԵԼ Է ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԱՐԱ ԳՅՈՒԼԵՐԸ

Հոկտեմբերի 17-ին, 90 տարեկան հասակում մահացել է պոլսահայ աշխարհահռչակ լուսանկարիչ Արա Գյուլերը:

Նա լուսանկարչության ընկալման յուրահատուկ մոտեցում ուներ: Ասում էր, որ լուսանկարը պարտադիր չէ, որ արվեստի գործ լինի, սակայն այն պետք է արյանագրի յուրաքանչյուր պատմական փաստ: Արա Գյուլերը ծնվել է Ստամբուլում, 1928-ին, շապինգրահիսարցի հայերի ընտանիքում: Գյուլերը հարյուրավոր ցուցահանդեսներ է ունեցել ամբողջ աշխարհում, հրատարակել է բազմաթիվ գրքեր: Նա լուսանկարել է Ուինսթոն Չերչիլին, Մարիա Կալլասին, Ջոն Բերգերին, Բեռնարդ Ռասսելին, Սալվադոր Դալիին, Պաբլո Պիկասոյին, Ինդիրա Գանդիին, Սերգեյ Փարաջանովին: Պարգեւատրվել է ֆրանսիական Legion d' honneur, 2005թ.՝ թուրքական Grand prize of culture and art, 2009թ.՝ Նյու Յորքի Lucie Award մրցանակներով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

22.10.2018 Ղուկիանոս Հարյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանը եւ Հովսեփ Աստվածահողը, Հովսեփ Արիմաթացու եւ Քրիստոսի բարեկամ Ղազարոսի օր

28.10.2018 Տոն Խաչի Գյուտի

Խաչի Գյուտը Քրիստոսի խաչափայտին նվիրված չորս տոներից է:

327 թվականին բյուզանդական Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինեն, Տիրոջ խաչը գտնելու նպատակով, այցելում է Երուսաղեմ: Հուդա անունով մի հրեա օգնում է կայսրուհուն գտնել Քրիստոսի խաչվելու վայրը՝ Գողգոթան, որտեղ որոնումների արդյունքում հայտնաբերվում են Հիսուսի եւ նրան խաչակից երկու ավազակների խաչերը: Տիրոջ խաչը ճանաչելու համար մի պատանու դիակ հերթով դնում են դրանց վրա, որոնցից մեկի վրա պատանին հարություն է առնում, եւ այդպես ճանաչվում է տերունական խաչը:

ՆՈՐՈՒՅԹ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՕՐԱԿԱՆՈՎ ՎԱՐՁՈՎ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԻ

Ինչպես հայտարարել է Զբոսաշրջության ազգային գործակալության ղեկավար Գիորգի Չոգովածեն, Airbnb եւ Booking.com-ով բնակարանների օրական կարգով վարձով տալու համար ոչ մի սահմանափակումներ եւ հարկերի հաստատում պետությունը չի ծրագրում:

- Ցանկանում եմ ընդգծել եւ ասել հասարակությանը, որ ոչ մի հավելյալ հարկ եւ սահմանափակումներ չեն ծրագրվում բնակարանի օրական վարձով տալու դեպքում: Այս հարցը չի քննարկվել եւ ոչ էլ քննարկվելու է: Հակառակը, այս ոլորտի զարգացումը Վրաստանին հնարավորություն տվեց հավելյալ տեղավորման հնարավորություն ստեղծել ընդունել է'լ ավելի մեծ քանակությամբ զբոսաշրջիկների: Ուրախ ենք, որ դրանով եկամուտ է ստանում նաեւ մասնավոր բիզնեսը,- հայտարարել է Գիորգի Չոգովածեն:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ «D» ԽՄԲԻ ՀԱՂԹՈՂ

Շարունակվում են UEFA-ի Ազգերի լիգայի ֆուտբոլային մրցաշարի խմբային հանդիպումները: «D» դիվիզիոնի առաջին խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականն անընդմեջ չորրորդ հաղթանակը տոնեց եւ 12 միավորով, անկախ մնացած երկու հանդիպումներից, անհասանելի դարձավ խմբի մրցակիցների համար: Վրաստանի ազգային ընտրանին իր հաղթարշավում պարտության մատնեց Ղազախստանի (մրցակցի դաշտում՝ 2:0 հաշվով), Լատվիայի (սեփական հարկի տակ՝ 1:0, մրցակցի դաշտում՝ 3:0), Անդորրայի (սեփական հարկի տակ՝ 3:0) հավաքականներին եւ նվաճեց Ազգերի լիգայի կիսաեզրափակիչ փուլում հանդես գալու ուղեգիր:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա «D» դիվիզիոնի չորրորդ խմբում հանդես եկող Հայաստանի ընտրանին, չորս հանդիպումներից հետո՝ 6 միավորով, զբաղեցրեց խմբի աղյուսակի 3-րդ հորիզոնականը: Սեփական հարկի տակ Զիբլարթարի հավաքականից կրած պարտությունից հետո (0:1), Հայաստանի թիմը սեփական հարկի տակ՝ 4:0 հաշվով, առավելության հասավ խմբի առաջատար Մակեդոնիայի հավաքականի նկատմամբ:

Ներկա դրությամբ, խմբի աղյուսակը՝ 9 միավորով, գլխավորում է Մակեդոնիայի թիմը: 6-ական միավորով նրան հետեւում են Զիբլարթարի ու Հայաստանի թիմերը: Աղյուսակը՝ 3 միավորով, եզրափակում է Լիխտենշտեյնի հավաքականը:

Ազգերի լիգայի վերջին երկու տուրերի խաղերը կկայանան նոյեմբերին: Վրաստանի թիմը մրցակցի դաշտում իր ուժերը կչափի Անդորրայի, ապա սեփական հարկի տակ կընդունի Ղազախստանի հավաքականներին: Իսկ Հայաստանի թիմը նոյեմբերի 16-ին արտագնա խաղով կմրցի Զիբրալթարի, իսկ նոյեմբերի 19-ին՝ Լիխտենշտեյնի դեմ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՇԱ՞ՌՔ ԱՎՏՈՏԵԽԶՆՆՈՒՄՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ...

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը բացահայտել է ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննման կեղծ վկայական տրամադրելու փաստեր»,- այս մասին տեղեկություն է տարածում ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը:

«Վերջին ժամանակաշրջանում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա սկսել ենք հետաքննել Վրաստանի մասշտաբով, տարբեր շրջաններում գտնվող տեխնիկական զննման կենտրոնների կողմից, Վրաստանի կառավարության որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի պահանջների խախտմամբ, տեխնիկապես անսարք ավտոտրանսպորտային միջոցների, տեխնիկական զննման դրական վկայականները օրինախախտմամբ տրամադրելու փաստերը:

Անցկացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում, Թբիլիսիում, Սամեգրելո-Զեմո Սվանեթիի, Իմերեթիի, Կախեթիի եւ Մցխեթա Մթիանեթիի շրջաններում, հայտնաբերվել է տեխնիկական զննում իրականացնող 10 կենտրոն, որոնց աշխատակիցները ինչպես մունիցիպալ, այնպես էլ՝ մասնավոր սեփականությունում առկա ավտոտրանսպորտային միջոցներն ստուգելիս, չնայած դրանց արտաքին եւ/կամ տեխնիկական վնասվածքների, տրամադրում էին տեխնիկական զննումը անցնելու կեղծ վկայականներ:

Քննչական ծառայության աշխատակիցները, դատարանի որոշման հիման վրա, տեխնիկական զննման վերոնշյալ կենտրոններում իրականացրել են համապատասխան քննչական գործողություններ: Այս փուլում անցկացվում են համապատասխան փորձաքննություններ:

Հետաքննությունն ընթանում է Վրաստանի ՔՕ-ի 362-րդ հոդվածի երկրորդ եւ 221-րդ հոդվածի հինգերորդ մասերով, որը ենթադրում է 4-6 տարվա ազատազրկում»,- նշված է ֆինանսների նախարարության քննչական ծառայության տեղեկությունում:

«Վրաստան» թերթի աշխատակազմը զորակցում է թերթի համակարգչային ծառայության օպերատոր Արթուր Ակոպովին, սիրելի մոր՝

Նադյա Ռուբենի ԱԿՈՊՈՎԱՅԻ

մահվան կապակցությամբ եւ իր ցավակցությունն է բերում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Իսպանական հայտնի երգ-պար: 4.Գործվածքի տեսակ: 7.Երեւանի պարի պետական համույթի ղեկավար ... Խանամիրյան: 9.Արցախի պատերազմի հերոս ... Մելքոնյան: 11.Գետ Ֆրանսիայում: 12.Աղերսագին որեւէ բան խնդրել (ժող.): 13.«Գիշեր ու զօր դու հնչում ես, իմ անուշ ...» (ժող.երգ): 14.Բարբիի ընկերուհի տիկնիկը: 17.Պետություն Ասիայում: 18.Երկնային մարմին: 20.Գետ Հայաստանում: 21.Մեղվի աշխատանքի արդյունքը: 22.Ե'վ Շիրազ, ե'ւ Սարգսյան: 23.Քաղաք Արաբական Միացյալ Էմիրություններում: 24.Պետություն Հարավային Ամերիկայում: 25.Բերդ Հայաստանում: 28.7-րդ նոտան: 29.Ուրարտական թագավորության հիմնադիր արքան: 30.Երկաթուղային կայարան Հայաստանում: 32.Մարդկության նախահայրը: 35.Մկրտել: 37.Հին հունացի կույր բանաստեղծ: 39....լուսին, ...գունդ: 41.Չեխիայի քաղաքամայրը: 42.Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ ... Վրացյան: 43.Լեռ Իսրայելում: 45.Ամերիկացի հայտնի դերասանուհի, մոդել: 46.Նորզելանդական թռչուն: 47.Ճապոնական ավատատիրության ժամանակների ռազմականացված ազնվականության խավ: 48.Բրնձի օղի: 49.Երգչուհի ... Պետրոսյան: 50.Գետ Վրաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հայ մանրանկարիչ, ճարտարապետ, Գլաձորի համալսարանի սան: 2.Զույգ եւ ... թվեր: 3.Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպանը Ֆրանսիայում՝ ... Ահարոնյան: 4.Ջնռսած դիակ: 5.Ջիվանի, Շերամ, Շահեն: 6.Ֆրանսիացի կոմպոզիտոր Քամիլի օպերան՝ «Սամսոն եւ ...»: 8.Քաղաք Իրաքում: 10.Խոշոր գետ Սիբիրում: 14.Ե.Չարենցի ստեղծագործություններից: 15.Համեմունքի տեսակ: 16.Մարզ Հայաստանում: 17.Հայաստանի շախմատի չեմպիոն: 19.Պետություն Եվրոպայում: 20.Ողջ, ամբողջ (բրբ.): 26.Անձնական դերանուն: 27.Հանգած հրաբուխ Հայկական լեռնաշխարհում: 29.Վանք Արցախում: 31.Ծովափնյա քաղաք Վրաստանում: 32.Ֆրանսիացի նշանավոր ֆիզիկոս: 33.Անապատ Սիրիայում՝ ... Զոր: 34.Նար-Դոսի անավարտ վիպակներից՝ «Վերջին ...ներ»: Կավե գինու աման: 36.Վանա լճի կղզիներից: 37.Վիետնամի մայրաքաղաքը: 38.Քավորի սիրելին: 40.Պետություն Աֆրիկայում: 42.Լատինաամերիկյան պար: 44.Հայ անվանի դերասան ... Ավետիսյան: 48.Աշակերտ, մոնթ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Երդվյալ: 9.Ոգետու: 10.Տիղմ: 11.Շահեկան: 13.Իշխում: 16.Թան: 17.Ռեն: 19.Կոկուռ: 22.Նիցցա: 24.Գուրամի: 25.Իրար: 27.Աչինսկ: 29.Վիճելի: 32.Ամիրանի: 33.Ռյազան: 35.Վիտի: 37.Ալմ: 39.Մանաս: 40.Օճառ: 43.Ավա: 44.Ցույց: 47.Ահու: 49.Համեղ: 50.Սթափ: 53.Վանա: 54.Ալի: 55.Քույր: 57.Հոտ: 58.Անալոգ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Երկաթ: 2.Ավշեն: 3.Պատառ: 4.Գոմի: 5.Շեյխ: 6.Քուրմ: 8.Լինել: 12.Հայց: 14.Շլոր: 15.Ուսում: 18.Հարս: 19.Կումիր: 20.Կարենինա: 21.Ռիկի: 23.Ցինիզմ: 26.Ական: 28.Չթյա: 29.Վիզ: 30.Ճավա: 31.Լիտավր: 34.Ալպյան: 36.Իսա: 38.Շահ: 41.Ճաղատ: 42.Ռուսիա: 45.Ուհան: 46.Ցմահ: 48.Դաքա: 51.Փուլ: 52.Օրգ: 56.Յո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445